«ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«22» մայիս 2025թ. **№ 231-25-Ա**

ք. Երևան

«ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 111-Ա-24 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2024 թվականի ապրիլի 30-ի «Փորձագիտական կենտրոնի կողմից տրամադրվող վճարովի ծառայությունների գնացուցակը հաստատելու մասին» N 111-Ա-24 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումը՝

1) Հրամանի N 2 հավելվածի գնացուցակի 16-րդ տողը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

16.	1) ներմուծվող դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի փաստաթղթային նախնական փորձաքննության համար	
	ա. մեկից մինչև 5 անվանման համար	12 000
	բ. 6-ից մինչև 20 անվանման համար	20 000
	գ. 21 և ավելի անվանման դեպքում՝ յուրաքանչյուր անվանման համար	1 000
	2) գրանցման կարգավիճակի ճշտման կամ գրանցանմուշի հետ նույնականության հաստատման կամ արտադրանքի պատկանելության նախնական փորձաքննության համար	
	ա. մեկից մինչև 5 անվանման համար	12 000
	բ. 6-ից մինչև 20 անվանման համար	20 000
	գ. 21 և ավելի անվանման դեպքում՝ յուրաքանչյուր անվանման համար	1 000

2) Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՏՆՕՐԵՆ՝ **Ա.ԲԱՂՐՅԱՆ**